



## Ախալքალაքիում ոսկերչական արտադրությունը ընդլայնվեց

Հնտանեկան բիզնեսի հաջող օրինակ է ոսկերչական արհեստանոցը, որը Ախալքալաքիում, Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը Ախալքալաքիում նախագծի շրջանակներում ֆինանսավորվեց:

Արմեն Քեֆաքսյանը Ախալքալաքի երիտասարդ ոսկերիչ է: Նա արվեստին 5 տարի առաջ Հայաստանում է տիրապետել: Մինչև այդ Ռուսաստանում հոր հետ շինարարության աշխատանքներով էր զբաղվում: Արմենը միշտ ուզում էր, ստացած գիտելիքները եւ ձեռք բերած փորձը ծախսեր հայրենի Ախալքալաքի վրա: Իսկ ENPARD – ի ծրագիրը այդ հնարավորությունը տվեց նրան: Նա միշտ հետևում է ոսկե իրերին նորագույն կատալոգներին եւ հաճախորդներին տրենդային մոդելներ էր առաջարկում: Ախալքալաքիում եւ ընդհանրապես Մամքիսե-Ջավախեթիում ոսկե իրերը մեծ պահանջարկ ունեն: Ոսկերչական արտադրությունը հիմնականում օգտագործում են որպես հարսանաց եւ ծննդյան օրերի նվերներ:



Նախագծի արդյունքում զբաղվեց 2 տեղացի  
Նախագծի ընդհանուր բյուջեն 10,000.00 լարի  
Եվրամիության ֆինանսավորումը 6,000.00 լարի  
Համաֆինանսավորումը 4,000.00 լարի



Արմենը Ախալքալաքիում լավ ոսկերիչ է համարվում եւ հաճախորդներ էլ շատ ունի: Իսկ շատ հաճախորդները տարբեր ճաշակ ունեն եւ բոլորին բավարարել հնացված սարքավորումներով անհնար է:

«Դրամաշնորհի գումարը ողջամտորեն օգտագործեցինք եւ ժամանակակից սարքավորումներ ձեռք բերեցինք արգոնի կետավոր եռակցման ապարատ, մանրադիտակ շտատիվով, պնեմոփորագրման ապարատ, չորացնող վառարան եւ այլն: Թանկարժեք մետաղներից պատրաստում ենք մատանիներ, ապարանջաններ, ակնջօղեր, ուլունքներ, կախազարդեր եւ այլն: Ջարդի էսկիզը կազմում ենք ըստ հաճախորդի պահանջի, կան դեպքեր, երբ հաճախորդը սեփական էսկիզով է գալիս եւ խնդրում, որ նրա պահանջը բացարձակ ճշգրտությամբ բավարարենք» - ասում է Մարի Իրիցյանը:





Ժամանակակից սարքավորումները ճիշտ որ բացարձակ ճշգրտությամբ եւ նրբորեն են կատարում փորագրությունը, կռումը, արջնումը, օքսիդացումը եւ այլ ոսկերչական գործընթացներ: Սակայն այս դեպքում արդյունքը միայն սարքավորումից կախված չէ, մեծ դեր է խաղում նաեւ ոսկերչի բարձր պրոֆեսիոնալիզմը:

«Ոսկերիչի գործում կարեւոր է ճշգրտությունը: Որքան էլ որ պրոֆեսիոնալ լինես, ճշգրտությունը պաշտպանելու համար հարկավոր է որակյալ մանրադիտակ: Շնորհակալություն եմ ուզում հայտնել Եվրամիությանը, որի օգնությամբ ժամանակակից եւ բարձր որակի մանրադիտակ ձեռք բերեցինք: Դրանից օգտվում են նաեւ իմ ոսկերիչ կոլեգաները: 1 Տարի է, ինչ նորացված սարքավորումներով ենք աշխատում: Իրերի որակը զգալիորեն բարելավվեց եւ պատվերներն էլ ավելացավ: Պլանավորել եմ ընդլայնել արհեստանոցը եւ ավելի շատ մարդ զբաղեցնել: Ուզում եմ ուրիշներն էլ հետեւեն իմ օրինակին եւ հայրենի հողի վրա փորձեն սկսել սեփական գործը: Սա կարեւոր է շրջանի եւ ընդհանրապես երկրի զարգացման համար» - ասում է Արմեն Քեֆաքսյանը:



Նախաձեռնությունը ֆինանսավորվել է Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Զորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ [www.enpard.ge](http://www.enpard.ge).